

Արշակ Աղայր: անհանր
Հանդիս — Մարտի

1173

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԷԻ

1917 ՅՈՒՆԻՍ





1173

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ա. Ղ. ՔԱՏԱԽՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՅԻՐԷԻ

1917 ՅՈՒՆԻՍ

ՅԻՄ
342



ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԷԻ

1917 ՅՈՒՆԻՍ

Ա. ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ-ՈՒԱԾ 1.— Աղքատախնամ ընկերութեան նը-
պատակն է խնամել Գահիրէի Հայ Աղքատները:

Բ. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 2.— Ընկերութեանս անդամավճարն է ամ-
սական առնուազն 2 դրշ. ողջ:

ՅՕԴ. 3.— Ընկերական ամեն իրաւունք կը վայե-
լեն այն ամէն անդամները՝ որոնք Ընդհանուր Ժողով-
ներու գումարումի թուականէն առնուազն երեք ամիս
առաջուան իրենց պարտքերը վճարած են, իսկ նորագիր

անդամները նոյն իրաւունքները վայելելու համար պէտք է առնուազն Ընդհանուր Ժողովի թուականէն երեք ամիս առաջ անդամ արծանագրուած եւ կանխիկ կամ ամսէ ամիս վճարած ըլլան իրենց բաժնեգիրները:

307. 4.— Անդամուհիներ] եւ օտարազգի անդամներ ո՛չ ընտրող եւ ոչ ալ ընտրելի կրնան ըլլալ:

307. 5.— Ընկերութեանս վճարուած ո՛ր եւ է բաժնեգիրն կամ նուէր ետ չի դարձուիր:

307. 6.— Մեկէ աւելի բաժնեգիրն վճարող անդամներ ձայնի առաւելութիւն չունին:

Գ. ԺՈՂՈՎՆԵՐ

307. 7.— Աղքատախնամ Ընկերութիւնը ունի երկու ժողովներ

Ա. Ընդհանուր Ժողով

Բ. Գործադիր Ժողով

307. 8.— Ընդհանուր Ժողովը կը կազմեն կանոնադրիս Յրդ յօդուածին տրամադրութիւնը լրացնող բոլոր անդամները:

307. 9.— Գործադիր Ժողովը կը բաղկանայ Ընկերութեանս եօթն անդամներէն, որոնց չորսը կ'ընտրուի Ընդհանուր Ժողովէն եւ երեքը տեղւոյս Քաղաքական Ժողովէն:

ՅՕԴ. 10. — Ժողովներու մէջ, որոշումները յետ վիճաբանութեան կը տրուին ներկայից յայտնի կամ գաղտնի քուէով եւ օրինաւոր են՝ եթէ մեծամասնութեան ձայնը կը ներկայացնեն:

Ձայներու կամ քուէներու հաւասարակշռութեան պարագային Ատենապետին ձայնը գերակշիռ է:

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 11. — Ընդհանուր ժողովը տարին անգամ մը անպայման ի նիստ կը գումարուի Դիւանին կողմէ:

Բացառիկ նիստեր կրնան գումարուիլ երբ դիւանը հարկ տեսնէ կամ Ընկերութեան անդամոց առնուաղն մէկ երրորդը զրաւոր կերպով պահանջէ:

ՅՕԴ. 12. — Ընդհանուր ժողովի ատենանը կը բացուի՝ երբ Խմբիւրէ գնուող անդամներու կէսէն գոնէ մէկ աւելին ներկայ է նիստին:

ՅՕԴ. 13. — Եթէ առաջին հրաւերով մեծամասնութիւն չգոյանայ, ներկայք ուրիշ օր մը կ'որոշեն, ուր տրուած որոշումները վաւերական են, բաւ է որ ներկայից թիւը քսանէն պակաս չըլլայ եւ ժողովին Օրակարգը հրաւիրագրերու մէջ ծանուցուած ըլլայ անդամոց: Այն պարագային որ օրակարգը չսպառի առաջին նիստին մէջ, յետագայ նիստեր կ'որոշուին ներկայից կողմէ եւ նոյն նիստին շարունակութիւնը կը համարուին անոնք:

ՅՕԴ. 14. — Ընդհանուր ժողովը գաղտնի քուէով կ'ընտրէ Մայր Դիւան մը, որ կը բաղկանայ Ա. եւ Բ.

Ատենապետներէ եւ Ա. եւ Բ. Ատենադպիրներէ:

Մայր Դիւանի պաշտօնը կը տեսէ չորս տարի եւ անդամները վերընտրելի են:

30Դ. 15.— Ընդհանուր ժողովոյ պարտականութիւնն է.

Ա.— Ընտրել Գործադիր ժողովոյ չորս անդամները:

Բ.— Գործադիր ժողովոյ տարեկան տեղեկագիրը եւ հաշիւները քննել եւ վաւերացնել:

Գ.— Ի հարկին վերաքննել Ընկերութեան կանոնագիրը:

Դ.— Տարեկան կանոնաւոր նիստէն զատ բացառիկ նիստեր գումարել երբ կանոնագրի մէջ չը նախատեսուած խնդիրներ ծագին եւ կամ ընկերութեան շահերը պահանջեն:

Ե.— Իր տարեկան նիստին մէջ ընտրել երեք անդամէ բաղկացեալ հաշուեքննիչ յանձնաժողով մը՝ քննելու եւ մայր դիւանին միջոցաւ Ընդհանուր ժողովին նեկայացնելու համար Գործադիր ժողովոյ ընթացիկ տարուան հաշիւները:

Ե. ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

30Դ. 16.— Մայր Դիւանին պաշտօնն է.

Ա.— Հրաւերագրերով եւ լրագրական ծանուցումներով Ընդհանուր ժողովը ի նիստ հրաւիրել ամէն տարի Մարտ ամսոյ առաջին եօթնեակին անպայման, իսկ բացառիկ նիստի հրաւիրել, երբ իր ձեռնհասութենէն վեր խնդիրներ ծագին, կամ Ընկերութեան անդամոց մէկ երրորդը պահանջէ զրաւոր կերպով:

Վ. Կ. - 1909

Բ.— Իր եւ Գործադիր Ժողովոյ մէջ տեղի ունեցած ամբողջական կամ մասնակի փոփոխութիւնները ժամանակին տեղեկագրել Քաղաքական Ժողովին:

Գ.— Պարբերական այցելութիւններով իրազեկ ըլլալ Գործադիր Ժողովոյ գործունէութիւններուն եւ հաշիւներուն: Պատշաճ թելադրութիւններով դիւրացնել անոր գործը, կարգադրել անոր ծեռնհասութենէն վեր եղած խնդիրները եւ բառնալ պատահական վէճերը եւ թիւրիմացութիւնները:

Դ.— Հսկել կազմական եւ ներքին կանոնադրութեանց անթերի գործադրութեան:

Ե.— Գործադիր Ժողովոյ տարեկան տեղեկագիրը եւ հաշուեկշիռը ժամանակին ստանալ եւ մատուցանել Ընդհանուր Ժողովին:

Զ.— Գործադիր Ժողովոյ հրաժնարած կամ պակասած անդամոց տեղ պաշտօնի հրաւիրել ընտրութեանց ատեն առաւելագոյն քուէ ստացողները:

Զ. ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

307. 17.— Գործադիր Ժողովը կը բաղկանայ եօթը անդամներէ որոնց չորսը կընտրուի ընկերութեան Ընդհանուր Ժողովէն եւ երեքը տեղւոյս Քաղաքական Ժողովէն:

307. 18.— Գործադիր Ժողովը զադտնի քուէով կընտրէ իր մէջէն առաջին եւ փոխ - առնանապետները,

ատենադպիր մը, գանձապետ մը, համարակալ մը եւ 2 խորհրդականներ:

ՅՕԴ. 19. — Գործադիր ժողովոյ պարտականութիւնն է.

Ա. — Կանոնաւոր կերպով գումարել իր նիստերը առնուազն շաբաթը անգամ մը, միշտ մեծամասնութեան ներկայութեամբ եւ ըստ 10-րդ յօդուածի տրամադրութեան:

Բ. — Յարգել եւ գործադրել ներքին կանոնադրութեան բոլոր տրամադրութիւնները:

Գ. — Ընկերութեան հասոյթները բարւոք մատակարարել եւ յատկացնել զանոնք միմիայն ընկերութեան նպատակին (Յօդ. 1):

Դ. — Ընկերութեան անդամոց թիւը աւելցնելու ջանալ, բաժնեգիրները կանոնաւորապէս գանձել եւ նոր հասոյթի միջոցներ ստեղծել:

Ե. — Իր ձեռնհասութենէն վեր եղող խնդիրները Ընդհանուր ժողովոյ Դիւանին ներկայացնել:

Զ. — Ամէն տարւոյ վերջը (Դեկտեմբեր 31) Մայր Դիւանին ներկայացնել իր տարեկան հաշիւները, տեղեկագիրը եւ յառաջիկայ տարուան պիւտճէն:

ՅՕԴ. 20. — Գործադիր ժողովոյ պաշտօնավարութեան շրջանն է երկու տարի, որ կսկսի Յունուարէն եւ կը վերջանայ Դեկտեմբերին եւ անդամները վերընտրելի են:

Եթէ պաշտօնավարող Գործադիր ժողովոյ անդամներէն մինչեւ երեքը հրաժարին կամ պակսին, ժո-

Արեւիկ Ալպարա
Գոմեհրէ — Մարտիրոս

դովը կը պահէ իր գոյութիւնը եւ Մայր Դիւանին կողմէ պաշտօնի կը հրաւիրուին Ընդհանուր Ժողովոյ ընտրութեանց մէջ առաւելագոյն քուէ շահող անդամները: Իսկ երբ ժողովը կը կորսնցնէ իր մեծամասնութիւնը, նոր Գործադիր Ժողովոյ մը ընտրութեան կը ձեռնարկուի ըստ կանոնագրի:

Հրաժարեալ Գործադիր Ժողովը իր պաշտօնը կը շարունակէ մինչեւ յաջորդին գործի ձեռնարկելը:

Է. ՀԱՍՈՅԹՆԵՐ

ՅՕԴ. 21. — Ընկերութեանս հասոյթի աղբիւրներն են.

Ա. — Անդամավճարները.

Բ. — Առաջնորդարանի հասոյթներուն աղբատաց բաժնէն Քաղաքական Ժողովոյ քուէարկած պիւտճէն:

Գ. — Նուէրներ:

Դ. — Կտակներ՝ որոնց օրինաւորութիւնը կը հաստատուի Ազգային Իշխանութենէն:

Ե. — Վիճակահանութիւն:

Զ. — Գործադիր Ժողովոյ ջանքերով գոյանալիք ուրիշ հասոյթներ, ինչպէս՝ ներկայացումներէ, հանդէսներէ, եւայլն:

ՅՕԴ. 22. — Ընկերութեանս ընդհանուր հասոյթին 5 օ/օ եզրիպտական Քրէտի Ֆօնսիէի արժեթուղթերու վերածուելով, իբրեւ պահեստի գումար ի պահ կը

դրուի առաջնակարգ դրամատան մը մէջ, Ազգային Առաջնորդարանի միջոցաւ, ապագային չնախատեսուած կամ ստիպողական պէտքերու գործածելու առաջադրութեամբ:

Սոյն պահեստի գումարին գործածութիւնը Ընդհանուր ժողովով միայն կ'որոշուի եւ որոշումը կենթարկուի Քաղաքական ժողովոյ զրաւոր հաստատութեանը:

Ը. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ՆԵՏ

ՅՕԴ. 23.— 1917ին Ազգային Իշխանութեանց եւ Ընկերութեանս ժողովին համաձայնութեամբ, Աղքատախնամ Ընկերութիւնը ստանձնած է Աղքատաց Հոգաբարձութեան ձեռքով խնամասուող աղքատներու հոգածութեան գործը՝ հետեւեալ պայմաններով.

Ա.— Պահել Աղքատախնամ Ընկերութիւնը իր նախկին կազմին մէջ, իբրեւ առանձին Ընկերութիւն:

Բ.— Քաղաքական ժողովը տարեկան որոշ պիւտճէ մը կը յատկացնէ Ընկերութեան՝ Աղքատաց հասոյթներէն:

Սոյն պիւտճէին մատակարարութիւնը կը կատարէ Գործադիր ժողովը, որ անկախ է իր որոշումներուն մէջ:

Գ. — Քաղաքական ժողովը Ընկերութեան Գործադիր ժողովոյ անդամներէն երեքը միայն կ'ընտրէ Ընկերութեան Ընդհանուր ժողովի Դիւանէն իրեն մատուցուած ընտրելեաց եռապատիկ ցանկէ մը: Քաղաքական ժողովը ազատ է այդ ցանկէն դուրս ալ ընտրութիւն կատարել, բաւ է որ իր ընտրած անձինք կանոնագրին Յոդ. յօդուածին պայմանները լրացուցած ըլլան:

Դ. — Քաղ. ժողովոյ կողմէ ըտրուած Գործադիր ժողովոյ անդամք, միւս անդամներու հետ համահաւասար իրաւունք կը վայելին:

ՅՕԴ. 24. — Գործադիր ժողովը ամէն տարի Դեկտեմբերի վերջը, Մայր Դիւանի միջոցաւ պէտք է Քաղաքական ժողովոյ ներկայացնէ նոր շրջանի պիտնէն ի վաւերացում:

Քաղաքական ժողովոյ կողմէն Ընկերութեանս յատկացուած պիւտնէին վրայ ըլլալիք ուն է յաւելում Գործադիր ժողովոյ կողմէն կառաջարկուի, բայց Քաղաքական ժողովոյ որոշմամբ միայն կիրականանայ:

ՅՕԴ. 25. — Ընկերութեանս բոլոր տոմարներն ու ատենագրութեան տնտրակները նախապէս Առաջնորդարանէն դրօշմուած եւ թուագրուած եւ միշտ բաց պէտք է ըլլան Քաղաքական ժողովոյ եւ Առաջնորդարանի հաշուքննիչին առջեւ:

Մայր Դիւանը տարին անգամ մը կը ներկայացնէ Առաջնորդարանին Ընկերութեան Ընդհանուր համարատուութեան մէկ օրինակն, ի բնութիւն եւ ի վաւերացում:

ՅՕԴ. 26. — Եթէ ո՛ր եւ է պատճառաւ Ընկերութեան պաշտօնական մարմինները թերահան առ Քաղաքական Ժողովը իրենց համարատուութեան պարտականութեանց մէջ, Քաղաքական Ժողովը իրաւունք ունի ի կարգ հրաւիրելու թերացող մարմինը կամ մարմինները, եւ եթէ անոնց պաշտօնավարութիւնը վընասակար նկատուի Ընկերութեան շահերուն, Քաղաքական Ժողովը կը լուծէ զանոնք եւ իր կողմէն առժամեայ նախագահ մը կընտրէ, որ Ընդհանուր Ժողովը ի նիստ կը հրաւիրէ, ընտրելու համար Մայր Դիւանը եւ Գործադիր Ժողովը, որոց կը յանձնուի Ընկերութեան գործերը վարելու պաշտօնը:

Թ. ԼՈՒԾՈՒՄ

ՅՕԴ. 27. — Աղբատօսխնամ Ընկերութիւնը իր գոյութիւնը կը պահէ ցորչափ 20 անդամներ սոյն կանոնագրութեան տրամադրութեանց համեմատ կը գործեն, իսկ եթէ 20էն պակաս ըլլայ Ընկերութեան անդամոց թիւը, Քաղաքական Ժողովը տէր կըլլայ Ընկերութեան բոլոր շարժուն եւ անշարժ ստացուածքներուն եւ զանոնք կը գործածէ Ընկերութեան նպատակին՝ իր յարմար դատած եղանակաւ:

Ժ. ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

307. 28.— Սոյն կանոնագրի առաջին յօդուածը ամփոփութելի է, միւս յօդուածները կրեան վերաքննուիլ Ընդհանուր Ժողովոյ որոշումով: Վերաքննութեան համար Ընդհանուր Ժողովէն կընտրուի երեք հիգիէ բաղկացեալ մասնախումբ մը, որ հարկ տեսնուած փոփոխութիւնները կատարելով, նոր կանոնագիրը կը ներկայացնէ Ընդհանուր Ժողովին, որ զայն նոյնութեամբ կամ փոփոխմամբ ընդունելէ վերջ, կը ներկայացնէ Քաղաքական Ժողովին ի վաւերացում:

Սիւնչեւ նոր կանոնագրի վաւերացումը, սոյն կանոնագիրը գործադրելի է իր ամբողջութեամբ:

Վ. Ս. Ր. Ջ.



Վաւերացուած Աղբասախնամ Ընկերութեան Ընդհանուր Ժողովին Յունիս 17ի՝ 22րդ Նիսիւն մէջ եւ մասնւոյն Պատ. Քաղաքական Ժողովին՝ 1917 Յունիս 21ին, առ ի վաւերացումն :

Ի Դիմաց Դիւանի Ընդհանուր Ժողովոյ
Աղբասախնամ Ընկերութեան :

Ասեմադպիր


Ասեմապետ

ՅԱԿՈԲ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

Տօթ. Ն. Պ. ԲԷՉԷՆԱՆ

Գահիրէ, 1917 Յունիս 21

ՀԱՄԱՐ 338




Հաստատուած Քաղաքական Ժողովոյ տարւոյս 6 Յուլիսի (Ն. Տ.) Նիսիւն մէջ: Այս հաստատութիւնով դադարած է Աղբասախնամ Ընկերութեան 1900 Սեպտեմբեր 12ին, 1316 Համարով վաւերացուած Կանոնադիրը:

Առաջնորդական Փոխանորդ Հայոց

ԱԼԵՏԻՍ ԱԻԱԴ ԲԱՀԱՆԱՅ ՇԱՂՕԵԱՆ

Գահիրէ, Յուլիս (Ն. Տ.) 1917



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0541477

[204]

444

342

Wm. H. Brown
Wm. H. Brown
Wm. H. Brown